

Մրցույթ` ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

15.02.2019

Տիպ` [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու` Արևաշատի համայնքապետարան
<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի

Մրցույթ` ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
1. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇՄԱՏԱԿԱԶՄԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.2-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ՋՐԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետը`

ա) կատարում է Աշխատակազմի քարտուղարի

հանձնարարությունները` ժամանակին և պատշաճ որակով.

բ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, մասնակցում է դրանց շինարարությանը և

վերանորոգման աշխատանքներին: գ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում

գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների,

վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները

դ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը

ե) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է համայնքում տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին: զ)

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը:

է) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ընդերքի , ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և բ

պահպանության միջացառումները: ը) հետևում է աշխատակազմի

քարտուղարի հանձնարարականների, համապատասխան

ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին

զեկուցում է աշխատակազմի քարտուղարին թ/ Աշխատակազմի

քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը,

անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում, ժ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները. ժա) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին. ժբ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: 1-ին կարգի մասնագետն ունի օրենքով իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ.

ա) միջնակարգ կրթություն.

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, <<Զրային օրենսգրքի մասին>>, <<Ընդերքի մասին>> ՀՀ օրենսգրքի, <<Կենդանական աշխարհի մասին>> օրենքի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ձանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
զ) մեկ լուսանկար(3x4 չափսի)

է)անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ` անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթը կկայանա 2019թվականի մարտի 20-ին, ժամը 15.00-ին Արևաշատի համայնքապետարանում:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2019թ-ի մարտի 5-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արևաշատի

համայնքապետարան կամ Արմավիրի մարզպետարան (հասցե` Արովյան 71, հեռ. 0237-2-76-49) :

Հասցե` ՀՀ Արմավիրի մարզ, Արևաշատ համայնք Երևանյան խճղ. 16
Հեռ..` +374 98-80-39-79

Էլ. փոստ` arevashatgyux@mail.ru

 [mrcuyt 2.doc](#)

Հասցե` ՀՀ Արմավիրի մարզ գ. Արևաշատ Երևանյան խճղ. թիվ 16
Հեռ..` +37498-80-39-79

Էլ. փոստ` [arevashatgyux@mail.ru](#)